ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
2026

ՀՈՒՆԻՍ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադի՛ր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 33-38-րդ և 67-69-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ր X նշաններ:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում փակագծերում նշված տառը:**

1) խեղ-ուկ, ար-յունք, սպր-ել, սպան-անոց **(ղ)**
2) ջրօրհնե-, ճա-ար, դիցու-, լայնափող- **(ք)**
3) թա-տ, բա-տակից, մա-թանք, նա-ճիր **(խ)**
4) գոմ-շ, այժմ-ական, ելև-ջ, հյուլ- **(ե)**

2 **Ո՞ր շարքի բառերից ոչ մեկում կրկնակ բաղաձայն *չկա:***

1) ըն-արմանալ, ու-եգրություն, տա-ընթերցում
2) հո-անդական, այ-ենական, կեղ-ամ
3) դեռափ-իթ, նորե-ուկ, հո-երգություն
4) խորազ-ին, ըն-եմ, ամպհո-անի

3 **Ո՞ր շարքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում անջատ:**

1) մեջք(մեջքի), մուգ(կարմիր), դեմ(հանդիման)
2) զառ(ի)վայր, ըստ(ամենայնի), հարյուր(մեկ)
3) առ(հավետ), մեծ(մասամբ), ուր(որ)է
4) հետ(դառնալ), ի(լրումն), դափ(դատարկ)

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերում ձայնավորի կամ երկհնչյունի սղում կա:**

1) թշնամանք, բազկաթոռ, արկղիկ, կառուցում
2) պտտաձող, տղմոտ, պատվելի, գարնանային
3) ոսկեղեն, մանրէ, մատենադարան, կապտականաչ
4) մածնաբրդոշ, աղավնափետուր, երկնային, մահճակալ

5 **Ո՞ր շարքի բոլոր բառերի կամ բառաձևերի վերջին վանկն է շեշտվում:**

1) միակ, համր, ամանորյա, մինչև
2) հեքիաթ, երրորդ, վարագույր, առհավատչյա
3) ընկերական, տգիտություն, չեմ տա, հիմար
4) տերև, դուր գալ, այսպիսի, համընկնել

6 **Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:**

1) թերեփ-կիսահում, խանդաղատանք-փաղաքշանք, ասպնջական-վաղնջական
2) տխմար-պակասամիտ, խանդակ-հոռի, սուրհանդակ-բանբեր
3) լայնախոհ-ներհուն, քաղցրավենիք-հրուշակեղեն, խոսնակ-ճամարտակ
4) սնապարծ-մեծամիտ, առվույտ-երեքնուկ, առաձգական-դյուրաթեք

7 **Ո՞ր շարքի բառերից *ոչ մեկի* արմատին (արմատներից մեկին) *չի* կարող միանալ *-ատ* վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի:**

1) գանգամաշկ, կիսամյակ
2) նվազագույն, ամրակուռ
3) կավագործ, քնաթաթախ
4) ապիկար, ձյունափայլ

8 **Ո՞ր տարբերակում բառի սխալ բացատրություն *չկա:***

1) **ծխնի**–որոշ ժամանակ ծխի մեջ պահած, **երկպառակություն**–համերաշխության խախտում
2) **կոնդակ**–կաթողիկոսի պաշտոնական գրություն, **ճարճատյուն**–բորբոքվելով վառվելու կրկնվող ձայն
3) **ծերպ**–մի բանի մեջ բացված ճեղք, **զազիր**–սարսափ առաջացնող
4) **դիպակ**–որևէ ստեղծագործության հատված, **դարակազմիկ**–նոր դարաշրջան բացող

9 **Ո՞ր տարբերակում են դարձվածքները ճիշտ համապատասխանեցված իրենց իմաստներին:**

1. արյունը գլխին խփել	ա. չհամառել
2. լեզուն կապվել	բ. հանձնվել
3. քարը փեշից թափել	գ. զայրանալ
4. զենքերը վայր դնել	դ. պապանձվել

1) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
2) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա
3) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ
4) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա

10 **Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն *-եղ* վերջածանց:**

1) մարմնեղ, ուժեղանալ, փառահեղ
2) շքեղաշուք, կանթեղ, թիկնեղ
3) զորեղ, հյութեղ, հրաշագեղ
4) հոնեղ, հնչեղ, ահեղագոչ

11 **Ո՞ր նախադասության մեջ կրկնադիր շաղկապ կա (նախադասությունները կետադրված չեն):**

1) Եթե քամի չկա ոչինչ չի խանգարում ճանճին նա միշտ նստում է որոշակի ուղղությամբ կամ հյուսիս-հարավ կամ արևելք-արևմուտք:
2) Վերջացավ կռիվը ինչքան ժամանակ Քեզնից ոչ մի լուր ու ոչ մի նամակ:
3) Մենք հպարտանում էինք նրանով և հարգում նրան որովհետև երևելի հայ էր և մեր ուսուցիչն էր բայց չէինք սիրում նրան ոչ մի անգամ հայերեն չխոսեց և նույնիսկ չժպտաց մեզ հայերեն:
4) Ապրեց մեզ մոտ ինը կամ տասը ամիս սակայն եթե միջանցքում կամ աստիճանների վրա պատահաբար չհանդիպեինք միմյանց առհասարակ անծանոթ կմնայինք:

12 **Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ:**

1) սարդոստայն, զոհասեղան, ածխահոր, քաղաքաղուռ
2) հարսնաքույր, միջանցք, ջրկիր, պատճեն
3) լուտանք, գնդացիր, կենսագիր, մենապար
4) ընդդիմախոս, լուսնագնաց, հաշվապահ, սպա

13 **Ո՞ր նախադասության մեջ բազմապատկական բայ *չկա:***

1) Վարազը թավալգլոր էր լինում, ցավից ժանիքներով հողը փորում, արմատներ պոկում, հետո խռխռոցով գետին ընկնում:
2) Առավոտը բացվում էր, ձյան վրա արյան շիթեր էին երևում, այստեղ-այնտեղ՝ խառնիխուռն հետքեր, կոտրատած ճյուղեր:
3) Մթամած երկնքում երբեմն փայլփլում էր կայծակի շեղբը ու շրջակայքը մի ակնթարթ լուսավորում:
4) Ալխոն մենակ արտ չի մտնում, որովհետև միթևանի հանդապահը գոռգոռում է, իրեն օրերով փակում են ցեխոտ գոմում:

14 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *վա* հոլովման:**

1) ամառ, կեսօր, անձնանուն, տարի
2) երեկ, ոոպե, ցերեկ, ժամ
3) շաբաթ, ժամանակ, վաղը, այսօր
4) կեսգիշեր, իրիկնաժամ, երբ, առաջ

15 **Ո՞ր նախադասության մեջ կապ *չկա:***

1) Այն օրվանից, ինչ իմ անունը տպագրված տեսա, այլևս ճակատագիրն ինձ համար խորթ մայր չէր:
2) Հեթումի հրամանի համաձայն՝ արարողապետը հայտարարեց հանդիսության սկիզբը:
3) Քարավանի տերը հրամայում է ուղտապանին, որ նա մնա, մինչև ուղտի համառությունն անցնի, հետո հասնի իրենց:
4) Իմ միտքն սկսել էր զբաղվել այնպիսի հարցերով, որոնք կապ չունեն պաշտոնիս հետ:

16 **Ո՞ր նախադասության մեջ գոյականով արտահայտված ենթակա կա:**

1) Լա՛ց վերջին լացդ, սի՛րտ իմ մենավոր:
2) Խաղի կանոնները պիտի հարգեն բոլորը:
3) Այդ շարժումի մեջ չկա՞ խոր իմաստ. ո՛վ ի՞նչ է կարծում:
4) Նա՝ տարեց այդ մարդը, եղբայրներից մեծն էր:

17 **Ո՞ր նախադասության մեջ ձևի պարագա *չկա:***

1) Ձմեռը նստում էր բուխարու մոտ, չոր փայտերը մանրամասն դարսում կողքին ու հատ-հատ գցում կրակի մեջ:
2) Ձիերը ահ ու սարսափով կանգնում էին կիսաքանդ կամրջի առաջ՝ վախենալով նրանով անցնելուց:
3) Արևը, իր ոսկեզօծ շողերով ողողելով կիրճի արևահայաց լանջերը, բարձրացավ վեր և ուրախ ժպտաց աշխարհին:
4) Ամպամած այդ օրից հետո էլ չեմ բարձրացել բրուտների տրորված ճանապարհով:

18 **Ո՞ր բարդ նախադասության ստորադաս բաղադրիչի պաշտոնն է սխալ նշված:**

1) Զորավարը խորհում էր այն մասին, որ պալատում իր թշնամիները կարող էին արքայի առաջ չարախոսել իրեն: - *վերաբերության խնդիր*
2) Տեղ հասնելու առաջին իսկ օրից Սմբատ Բագրատունին ուշիուշով հետևում էր, թե ինչ է կատարվում մայրաքաղաքում: -*հանգման խնդիր*
3) Փոքր-ինչ հետո նա դեմ առավ իրերի կույտի, որ բաղկացած էր հին փամփուշտներից, քայքայված դաշույններից, թրերից:- *որոշիչ*
4) Դու, որ ամենավաղ մանկությունից սկսած՝ չէիր սիրում ինքնամփոփ մարդկանց, այժմ դատապարտել ես քեզ կատարյալ մենության: *ենթակա*

19 **Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ *չկա:***

1) Այդ մարդու խորհրդին հետևելով՝ հայրս որոշեց՝ ինձ նույնպես ուղարկել քաղաք՝ երկաթագործության որևէ ճյուղ սովորելու:
2) Ինչ պայմաններով ես պիտի ծառայեի Գուլամյանցների տանը, հայրս ինձ չասաց:
3) Աբեղան երբեք՝ ոչ մի տեղ՝ ո՛չ երազների պարտեզներում, ո՛չ եկեղեցիների յուղաներկ սրբապատկերներում, չէր տեսել այդպիսի կենդանի հրեշտակի՝ այնքան հարազատ ու այնքան ծանոթ:
4) Եվ ահա վիմափոր տաճարի դռներից դուրս եկան սպիտակազգեստ դպիրները, նրանց հետևից՝ սարկավագները, իսկ վերջում բարձրաստիճան եպիսկոպոսներն էին ու վարդապետները:

20 **Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

1. Առկայծում են կարոտագին, երազուն
2. Այն աստղերը՝ որպես մոմեր սրբազան
3. Մեղմ գիշերի գեղագանգուր երազում
4. Հավերժաբար իրար կապված և բաժան

1) 3, 2, 1, 4
2) 2, 3, 4, 1
3) 3, 4, 2, 1
4) 2, 4, 1, 3

21 **Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված բարդի:**

1) *Ազատվելով մորս գրկից՝ ես կառք նստեցի:*
   Ես, երբ ազատվեցի մորս գրկից, կառք նստեցի:
2) *Նրանցից մեկն անմիջապես վազեց փողոց՝ քաղաքի միակ վիրաբույժին կանչելու:*
   Նրանցից մեկն անմիջապես վազեց փողոց, որ կանչի քաղաքի միակ վիրաբույժին:
3) *Իմ հանցանքը աքսորված ուսանողների հետ ծանոթանալս էր:*
   Այն, որ ծանոթացել էի աքսորված ուսանողների հետ, իմ հանցանքն էր:
4) *Այդ տարիներին բանվորը հարստահարվում էր պատահականության բերումով գործատեր դարձած երեկվա բանվորի կողմից:*
   Այդ տարիներին բանվորը հարստահարվում էր երեկվա բանվորի կողմից, որը պատահականության բերումով գործատեր էր դարձել:

22 **Ո՞ր շարքի բոլոր ստեղծագործություններն են Ա. Իսահակյանինը:**

1) «Մի մրահոն աղջիկ տեսա», «Հին աստվածներ»
2) «Հավերժական սերը», «Ռավեննայում»
3) «Մեր պատմիչները և մեր գուսանները», «Հարճը»
4) «Սաադիի վերջին գարունը», «Ոսկեհանդերձ եկար»

23 **Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:**



1) Նա իսկույն հանել է տալիս Կանդիդի ձեռնաշղթաները՝ ասելով, որ դա սխալմունք է, ապա հետ է ուղարկում իր մարդկանց, իսկ հետո երկուսին էլ ուղարկում Վենետիկ, որտեղ ժամանակավորապես հաստատվել էր իր եղբայրը:
2) Նա թեև պատասխանեց, բայց և անմիջապես զգաց, որ դա իսկական պատասխան չէր, և ծերունու հարցումը նկատելի հուզեց նրան և անչափ մտահոգեց:
3) Ինչքան էլ պապս ստիպեց, չասացի, թե ինչ էր եղել, և գիշերը մորեղբայրս համբուրեց ինձ ու ասաց, որ կամաց-կամաց իսկական տղամարդ եմ դառնում:
4) Կռիվը, որ տևական ժամանակ չէր դադարում, բավական հեռացավ քաղաքից, նրա մեջ հանկարծ զարթնեց մի փափագ՝ տեսնելու այրված տունը, իսկ դրա համար նրան օգնեց կինը, որը շարունակ տրտնջում էր, թե նոր բնակարանը հարմարություններ չունի:

24 **Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

Արտեմիսի տաճարը՝ ամբողջովին ……. ձյունաթույր ……., այնպես էր շողարձակում արևի շլացուցիչ……., որ ապշեցնում էր …….:

(երեսպատվել, մարմար, ճառագայթ, այցելու)

1) երեսպատված, մարմարով, ճառագայթներից, այցելուներին
2) երեսպատվելով, մարմարից, ճառագայթներով, այցելուներին
3) երեսպատված, մարմարից, ճառագայթներով, այցելողներին
4) երեսպատվելով, մարմարով, ճառագայթներից, այցելողներին

25 **Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը *չի* գործածվել:**

Հառաչում է ճերմակ քամին՝
Աչքն անհայտին հառած,
Իմ ծերության ճերմակ երգը
Բերանացի արած:

1) անձնավորում
2) հանգավորում
3) մակդիր
4) համեմատություն

26 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Գլուխգործոցը դարձել է զանազան (ընդ որում, ոչ միայն արվեստաբանական) հետազոտությունների առարկա, այդ թվում՝ փորձել են ճշգրտել ստեղծման տարեթիվը:
2. Համադրելով այդ հանգամանքը մի շարք այլ տվյալների հետ՝ գիտնականները եզրակացրել են, որ նկարը ստեղծվել է 1503-ին, երբ ծնվել է նրանում պատկերված կնոջ՝ Մոնա Լիզայի որդին:
3. Գիտնականների մի խումբ, ուսումնասիրելով հանրահայտ դիմանկարում պատկերված կնոջ ուսերին գցած թափանցիկ գլխաշորը, պարզել է, որ այդպիսիք կրել են նոր ծննդաբերածները:
4. Թերևս ոչ մի դիմանկար այնքան մեծ հետաքրքրություն չի առաջացրել, որքան Դա Վինչիի «Ջոկոնդան», որ բոլոր ազգերի և ժամանակների ամենահայտնի դիմանկարն է:

1) 3, 1, 2, 4
2) 4, 3, 1, 2
3) 4, 1, 3, 2
4) 3, 4, 1, 2

27 **Բերված հատվածը միջնադարյան ո՞ր առակից է:**

«Ամբողջ աշխարհի բարեկեցությունն եմ ես, որովհետև ես եմ վաստակում, չարչարվում ու հոգնում, և ապա դու և քո թագավորն ուտում եք: Եթե ես չվաստակեմ, դու և քո թագավորն իսկույն կմեռնեք»:

1) «Այրի կինն ու իշխանը»
2) «Եզը և ձին»
3) «Աստղեր և լուսին»
4) «Ոսկի և ցորեն»

28 **Ա. Բակունցի ո՞ր պատմվածքից բերված հատված *չկա:***

- *«Նրանք մանկության ընկերներ էին, և նրանց սերը ծնվել էր նույնքան աննկատ, ինչպես մի գիշերում բացվում է մուգ մանիշակը»:*
- *«Մեկ էլ դեմքը մոտենում էր, կանգնում էր աչքիս առաջ, և ես ճգնում էի՝ իմանալու՝ ժպտա՞ց աղջիկը, երբ ետ նայեցի, թե՞ միայն ինձ թվաց»:*
- *«Ծով կար նրա մտքում, և այդ ծովը ափ էր շպրտում մերթ սև թավիշե գլխարկով գլուխ՝ մազերը կարճ կտրած, մերթ երկարազգեստ մի կնոջ՝ թիկունքին երկար ծամեր, մերթ քարե քանդակներ»:*

1) «Մթնաձոր»
2) «Ալպիական մանուշակ»
3) «Միրհավ»
4) «Խոնարհ աղջիկը»

29 **Ո՞րն է Պ. Դուրյանի գլխավոր մտահոգությունը «Իմ ցավը» բանաստեղծության մեջ:**

1) առանց սիրո վայելքի կյանքից հեռանալը
2) ճակատագրի պարտադրած մշտական ցավն ու տառապանքը
3) թշվառության մեջ գտնվող հայրենիքին առանց օգնած լինելու մեռնելը
4) երիտասարդ տարիքում մեռնելը

30 **Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում ի՞նչ արարողակարգով է դաշինք կնքվում Հորդայի արքայի և հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանի միջև՝ ընդդեմ Պարսկաստանի:**

1) Հորդայի արքան բերել է տալիս մի թաս ջուր, և ինքն ու Վարդանը խմում են նույն թասից, այնուհետև երկուսն էլ երդվում են Ավետարանի վրա:
2) Աթլը ուխտը վավերացնում է իր մատանիով:
3) Հորդայի արքան և հայոց սպարապետը դաշույնով ծակում են իրենց բազուկները և ձեռքերը խաչելով՝ միմյանց խառնում արյունը:
4) Հայոց սպարապետը բավական վարժ ստորագրում է դաշնագրի տակ, իսկ Հորդայի արքան, անգրագետ լինելով, դաշույնով անցք է բացում բթամատի վրա և արյամբ վավերացնում դաշինքը:

31 **Գ. Զոհրապի ո՞ր նորավեպից է տրված հատվածը:**

«Ամենեն ավելի ամուր փակված դուռը, ամենեն բարձր պատը՝ մըտնելե չեն արգիլեր զինքը. բանալիին ծակեն, տախտակներուն ճեղքերեն ներս կսպրդի կարծես, անշշուկ ստվերի մը պես»:

1) «Փոստա՛լ»
2) «Զաբուղոն»
3) «Այինկա»
4) «Ճիտին պարտքը»

32 **Ո՞ր պնդումն է ճիշտ Հ. Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակի վերաբերյալ:**

1) Աղունը ցավով է նշում, որ իր որդի Արմենակը ժառանգել է ոչ թե իր հայր Իշխանի, այլ սկեսրայր Աբելի խառնվածքը:
2) Աղունը անսովոր էր մեծ ընտանիքում ապրելուն, քանի որ հայրական տանը ինքն ընտանիքի միակ զավակն էր:
3) Աղունի մայրացուն դեմ էր, որ Աղունը ամուսնանա Սիմոնի հետ:
4) Աղունը միշտ նշում է, որ թեև ինքը մայր չի ունեցել, բայց մայրացուն իրեն մեծացրել ու խնամել է հարազատի նման:

33 **Ո՞ր բառերում ուղղագրական սխալ կա:**

1. ճմրթել, 2. լվածք, 3. անհեթեթ, 4. դշխեմ, 5. խարխափել, 6. արհավիրհք, 7. կխտար, 8. բարվոքել

34 **Ո՞ր բառերում ինքնուրույն գործածություն *չունեցող* արմատ կա:**

1. սրաշեղք, 2. սիրասուն, 3. անողջախոհ, 4. շատախոս, 5. չունևոր, 6. խցիկ, 7. կառապան, 8. լուսաշող

35 **Տրված նախադասության ընդգծված բառերից որո՞նք են ենթարկված ձևաբանական փոփոխության:**

<u>1. Կար</u> մի ուրիշ խենթ, որ ամեն օր <u>2. ընտրում էր</u> մի փողոց և <u>3. դրա</u> մի որոշ <u>4. կետից</u> մի ուրիշ կետ <u>5. անընդհատ</u> գնում էր ու <u>6. գալիս</u> բացարձակորեն հանգիստ, երբեմն <u>7. կանգ էր առնում՝</u> քիչ անց <u>8. շարունակելով</u> երթևեկը:

36 **Ո՞ր նախադասություններում անորոշ դերանուն կա:**

1. Որքան էլ գիշերն ահավոր իջնի, Եվ ուր էլ գնամ՝ գլուխ դնելու, Հարազատ հող ես չեմ գտնելու:
2. Միլիոնավոր տարիների ընթացքում կրիաների որոշ տեսակներ յուրացրել են ցամաքը, մյուսները՝ ջրային տարածությունները:
3. Նայողին թվում էր՝ իշխանադուստրը նյութեղեն չէ, այլ կարծես կերտված է լիալուսնի նրբանուրբ շողերից:
4. Հայրս ուզում էր հիշեցնել գեներալին, որ իրենք նույն բարբառով են խոսում:
5. Ապոլոնը, որ բանաստեղծությունն է ներկայացնում և արևն է միաժամանակ, երբեք մութն ու մռայլը չի տեսել:
6. Այդ կինը երգում էր իր կորցրած սիրո մասին, և ոչ ոք չէր համարձակվում որևէ բառ ասել:

37 **Ո՞ր տարբերակներում է ընդգծվածը համառոտ նախադասություն:**

1. Ամենուրեք երևաց բուսականություն, <u>որին կարոտել էին աչքերս</u>:
2. Այսօր եթե ինձ հարցնեն, թե ինչ է հարստությունը, կասեմ, <u>որ դա անհոգ երիտասարդությունն է</u>:
3. Նավը հետ էր ցատկում, <u>կարծես շունչ էր առնում</u>, որպեսզի նորից դիմադրի զայրացած թշնամուն:
4. <u>Ա՜հ, երջանիկ չի եղել մանկությունս</u>, որովհետև միջավայրը, որտեղ ծնվել եմ, անթափանցելի խավար էր:
5. Մրրիկից հալածվող անձրևի շիթերը ճիպոտում էին նավապետի պղնձյա դեմքը, <u>սակայն և՛ ես, և՛ մյուսները հանգիստ էինք</u>:

38 **Ո՞ր թվերի տեղում բութ պիտի դրվի:**

Այդ դաշտավայրում թողնելով իր թոռանը(1) Կադմոսին(2) Հայկը մյուսների հետ գալիս հաստատվում է Վանա լճից հյուսիս-արևմուտք ընկած մի լեռնադաշտում(3) այն անվանում Հայք(4) ի պատիվ իր նախահայրերի: Բելի(5) անմիջական ղեկավարությամբ հսկա զորք է գալիս Հայաստան(6) հնազանդեցնելու Հայկին: Վերջինս իր զորքին կոչ է անում(7) կամ մեռնել կամ հաղթել: Զորքը լեռներում ամրանալով(8) սկսում է պայքարել:

39 **Բառերից քանիսո՞ւմ *ու* ձայնավորի հնչյունափոխություն կա:**

բնութագիր, տնկի, ըմպան, խցանահան, մշկենի, կանխատեսելի, բռնակալ, նշաձև

40 **Բառազույգերից քանիսի՞ բառերը հականիշներ *չեն:***

բացառիկ-սովորական, հակիրճ-ընդարձակ, խրթին-հեշտ, անկոտրում-անսասան, գժդմնել-ժպտալ, գլխավոր-թերի, իրական-պատիր, գայթակղել-վանել

41 **Ընդգծվածներից քանի՞սն են ածական:**

Նա մի <u>բարեկազմ</u> աղջիկ էր՝ մոտ <u>քսանհինգամյա</u>, ըստ <u>նորմանդական</u> սովորության՝ <u>խարտյաշ</u> մազերը <u>հավաքած</u> մի փոքր գդակի տակ: Նրա դեմքի գույնը՝ այտերի առողջ <u>կարմրությամբ</u>, ծավի աչքերի <u>գրավիչ</u> հայացքը հատկանշում էին այդ <u>տարածքի</u> կանանց:

42 **Ընդգծվածներից քանի՞սն են անուղղակի խնդիր:**

Այդ երկու տարիները ակնթարթի նման անցան, և կրկին ստվերի նման հայտնվեց **կործանման** վտանգը: Կրկին կատվի պես գողունի ներս մտավ ու **զարմանք** պատճառեց բոլորին: Սկզբում հոռոմները զորահավաք արեցին Վասպուրականում, վերջին հայ **զինվորներին** էլ տարան արևմուտք: Հոռոմաց դեսպանի **ժպիտով** հմայված արքան չհիշեց, որ **զահը** ստանձնելուն պես երդվել էր մոտենալ **Տարոնին**, իսկ Անիում նստած իշխանները, հիասթափված **կատարվածից**, ավելի ու ավելի նվաստացուցիչ թղթեր էին հղում **կայսերը**:

43 **Նախադասության անդամներից քանիսի՞ պաշտոնն է սխալ տրված:**

Խոնարհին մի քանի օր չէի տեսել, ու թվում էր՝ էլ չեմ տեսնելու, սակայն ևս մի անգամ այդ աղջկան հանդիպելու ցանկությամբ կանգ առա նրանց տան առաջ և բաց դռնով նայեցի ներս:

- **Խոնարհին** - հանգման անուղղակի խնդիր
- **մի քանի** – չափի պարագա
- **էլ** - ժամանակի պարագա
- **աղջկան** - ուղիղ խնդիր
- **կանգ առա** - բաղադրյալ ստորոգյալ
- **տան** - հատկացուցիչ

44 **Տրված նախադասություններից քանիսի՞ դիմաց է սխալ տրված, թե որ հայերենով է այն:**

- Ու գեթ ցոլք մը տայի ոսկի իմ հուրես
  Մութ հոգիի ճըրագներուն ցրտահար: -*արևմտահայերեն*
- - Արա՛քս, ինչո՞ւ ձկանց հետ Պար չես բռնում մանկական,
  Դու դեռ ծովը չի հասած՝ Սգավոր ես ինձ նման: -*արևմտահայերեն*
- Մեծցայ, սիրու տէր եղայ, երեսիս գոյնը կու գընայ.
  Մանկտի՛ք, ձեր արև՜ն ասեմ, որ սիրուն քարը չի դիմնայ: - *միջին հայերեն*
- Բերանն երկթերթի, վարդն ի շրթանց կաթէր,
  Լեզուին շարժողին Քաղցրերգանայր տաւիղն: - *գրաբար*
- Ո՛հ, իմ սիրտը կտրատվում է՝ Տեսանելով այսպես սեր
  Դեպի թշվառ մի հայրենիք, Որ ոտնակոխ եղած էր:- *արևելահայերեն*

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. ***Ե*** խոնարհման բոլոր անկանոն բայերը հրամայական եղանակում անկանոնություն են դրսևորում:
2. ***Ա*** խոնարհման բոլոր կանոնավոր պարզ բայերի եզակի հրամայականը և ըղձական ապառնիի եզակի երրորդ դեմքը համանուններ են:
3. Հետևյալ նախադասության մեջ հրամայական եղանակի բայաձև կա. *«Ու թող գա, թե կա, ավելի՛ չար բոթ, Մեխվի զոհ-երկրիս անարգված սրտին»:*
4. Հրամայական եղանակը ունի միայն մեկ դեմք և մեկ ժամանակ:
5. Դրական հրամայականը պարզ ժամանակաձև է, արգելականը՝ բաղադրյալ:
6. Կանոնավոր բայերի եզակի հրամայականը կազմվում է ***իր, ա*** կամ ***ու*** վերջավորությամբ:

Բ մակարդակ

46 **Համարակալված բառերում բաց թողած տառերը կամ տառակապակցությունները պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:**

Սայթա-ելով(1) լպ-ծուն(2) տա-տակամածի(3) վրա՝ քաշվեցի դեպի նավի ծայրը: Երկու ձեռքերով ամուր կառ-եցի(4) մի երկաթե գլանից, որի վրա փաթաթված էր խարսխի շ-թան(5): Նավը՝ որպես հար-ակվելու(6) պատրաստ վագր, բարձրացնում էր առջևի մասը: Երբեմն վայրա-(7) կոհակներն ուժգին թափով բարձրացնում էին նրան իրենց բաշերի վրա: Ինքնըստինք-ն(8) հասկանալի է, դա տարեր-ների(9) ցասկոտ հեգնանքն էր:

1) 2-ր, 4-ճ, 5-ղ, 7-գ
2) 2-ր, 5-ղ, 6-ձ, 8-եա
3) 1-ք, 4-ճ, 7-գ, 9-ք
4) 1-ք, 3-խ, 6-ձ, 9-ք

47 **Ո՞ր շարքի բառերից ոչ մեկը որևէ հնչյունափոխության *չի* ենթարկվում:**

1) գինդ, ձիրք, մունջ
2) թիմ, դուքս, տուփ
3) թեմ, մույթ, քուրդ
4) վիթ, նետ, միֆ

48 **Ո՞ր շարքի բոլոր բառերի (բառակապակցությունների) բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:**

1) ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՔՅԱԼ, ԴԱՎԹԱԿ ՔԵՐԹՈՂ
2) ԴԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ, ԱՐԾՐՈՒՆՅԱՑ ՏԻԿԻՆ
3) ԱՌՅՈՒԾ ՄՀԵՐ, ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ
4) ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՌԱՋԻՆ, ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ, ԽՆԿՈ-ԱՊԵՐ

49 **Ո՞ր նախադասության մեջ բառի կազմության կամ բառագործածության սխալ կա:**

1) Մենք ցանկանում ենք, որ ձեռնարկության սննկացումը դաս լինի մյուսներին:
2) Աղջկան տեսնում էր թե չէ, միանգամից անակնկալի էր գալիս:
3) Նրա ձեռքին եղել է ինքնաձիգ, և նա սպառնացել է շրջապատի մարդկանց:
4) Երբեմն այնքան ուժգին էր ձգում սանձը, որ ձին գիրք կանգ էր առնում:

50 **Ո՞ր շարքի բոլոր բառերի առաջին արմատն է միավանկ:**

1) թռչնորս, գնդակախաղ, ածխահանք
2) գերշահույթ, միջնաբերդ, կայարանամերձ
3) հայրենական, անաչառ, երազահան
4) վարչություն, հետաքննիչ, բազմահնար

51 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ բարդ:**

1) մարզադահլիճ, մտախոհ, գահակալ, կայսերապաշտ
2) փափկասուն, երթուղի, թանկարժեք, գեղաշուք
3) քթախոտ, ավարառու, կարգախոս, թախծանուշ
4) ճեմուղի, ոգեշունչ, ուղղամիտ, սառցահատ

52 **Տրված բանաստեղծական հատվածներից որո՞ւմ դարձվածք *չկա:***

1) Պատահում է՝ սիրտդ լցվում
Ու չի լալիս ժամանակին,
Ամպը անձրև է խոստանում
Ու չի տալիս ժամանակին:
2) Ծիածանները լռած երգեր են,
Լռած խոսքեր են աղոթքների,
Եվ կածանները ոտնահետքեր են
Վաղուց հող դարձած ճամփորդների:
3) Հացը բուրում է հողից
Մինչև եթերը…
Խղճիս ստրուկն եմ նորից
Ու գլխիս տերը:
4) Երազեցի շարունակ
Իմ կյանքի մեջ ես մանկուց
Ու մնացի միշտ մենակ
Պատրանքի մեջ ես մանկուց:

53 **Ո՞ր նախադասության մեջ կա անկանոն բայ, որը տվյալ ժամանակաձևում անկանոնություն է դրսևորել:**

1) Առաջին ճարտարապետը նկատում է, որ աշտարակը զգալի թեքվել է, և գործը կիսատ է թողնում:
2) Մի օր, երբ մայրը խմոր է շաղախում, լուսինը լալով գալիս է, մորից հաց ուզում:
3) Առաջ կոչ էինք անում, որ փրկեն կաքավներին, հիմա էլ կոչ պիտի անենք, որ արտերը փրկեն կաքավներից:
4) Մթնաձոր տանող միակ արահետն առաջին ձյան հետ փակվում է, մինչև գարուն ոչ մի մարդ ոտք չի դնում անտառներում:

54 **Ո՞ր նախադասության մեջ բայի բաղադրյալ ժամանակաձև *չկա:***

1) Թեև Անտոնը գրագրին պատվիրեց, որ ոչ ոքի չհայտնի գրության մասին մինչև իր վերադարձը, սակայն լուրը կայծակնային արագությամբ էր տարածվում:
2) Ահա և գարունը. ո՞ւմ սիրտը չի թրթռում գարնան առաջին ծաղիկների բացվելուն պես:
3) Պղտոր հեղեղի բերանն ընկած տաշեղի պես Լառ-Մարգարը շատ ափերի էր զարկվել:
4) Մարգարը ոչ ոքի չասաց, թե ինչու արցունքներ երևացին իր աչքերում, երբ առաջին անգամ գնացքի պատուհանից հայրենի եզերքը տեսավ, որտեղ պետք է ծլեին կորիզները:

55 **Ո՞ր նախադասության մեջ անկատար անցյալ ժամանակաձև *չկա:***

1) Շատ դարեր առաջ արևելքում մի փառահեղ իշխան է լինում. անունը մոռացվել է, բայց գործը հիշվում է:
2) Ծածկի ու տնակի միջև գտնվող ժայռում փորված կոպիտ սանդուղքը նրա բնակիչներին թույլ էր տալիս ապառաժի գագաթը բարձրանալ՝ թարմ օդ շնչելու:
3) Խուլ գյուղեր կային անտառների խորքում, բարձր-բարձր լեռների լանջերին և չափազանց խոր ձորերում:
4) Ամբողջ մի դար՝ հարյուր տարի էր ապրել Մարգարիտ տատը, և որդիներն ու դուստրերը վաղուց արդեն իրենք էին ալեզարդ պապիկներ ու տատիկներ դարձել, բայց նա դեռ ապրել էր ուզում և արարել:

56 **Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի մեկից ավելի բայ կա:**

1) Նա հայացքով փնտրում էր կարճահասակ ինչ-որ մեկին, որ կաղալով քիչ առաջ արագ-արագ չքացել էր ալիքվող բազմության ծովում:
2) Քնած թե արթուն՝ լսում էր երգը հեռավոր օվկիանի, ու հոգին, աշխարհից անէացած, տանում էր նրան հեռու մի աշխարհ, ուր ո՛չ վիշտ կար, ո՛չ էլ տառապանք:
3) Կանաչության անորոշ բույրերով հագեցած թմրաբեր օդից և երկար ժամանակ պառկած լինելուց նա քայլում էր հաճելի մի գլխապտույտով և մերթընդմերթ թիկունքի տակ զգում սպիացած վերքի թույլ տնքոցը:
4) Երբ քամին փչում է ծովից և բերում նոր, թարմագույն օրերի բուրումներ, կյանքը դառնում է զգլխիչ մի երազ:

57 **Ո՞ր նախադասության ընդգծված բառը մակբայ *չէ:***

1) Ամիսներ շարունակ նա փնտրում էր իր կորցրած հեծանիվը, մինչև <u>**վերջնականապես**</u> համոզվեց, որ գտնելու ոչ մի հույս չկա:
2) Կարտոֆիլը հետիոտն զառիվերը բարձրացնելը <u>**իսկապես**</u> անմտություն է, որովհետև զառիվերի գլխին կարտոֆիլ կա ցանված:
3) Գիշերը <u>**մշտապես**</u> հավաքվում են գյուղի կատուները, և նրանցով կարելի է հաշվել, թե քանի ծուխ ունի Անտառամեջ գյուղի տերտերը:
4) Իսպաներենն ու պորտուգալերենը <u>**հիմնավորապես**</u> սովորել-յուրացնելուց հետո նա անցավ արևելյան լեզուների ուսումնասիրությանը:

58 **Ո՞ր նախադասության մեջ միջադաս դերբայական դարձված *չկա* (նախադասությունները կետադրված չեն):**

1) Չին թռավ որթատունկերի և փոքր ծառերի վրայով և ինձ գետին գցելով վազեց հեռու:
2) Պատերազմից հետո մենք մուրացկանների նման ձեռքներս անցորդներին պարզած կանգնել էինք եկեղեցու նախշազարդ դռան մոտ:
3) Պահնորդները բակ մտնելով ճանապարհ բացեցին հավաքված ամբոխի միջով:
4) Իսահակյանը հետևելով ժողովրդական երգերի ավանդույթներին իր սիրո երգերում զգացմունքները բնության պատկերների հետ է զուգորդել:

59 **Ո՞ր նախադասության մեջ վաղակատար ձևաբայ *չկա:***

1) Այդ մեխը չէր կարող միայն իր ծանրությունից պոկվել. ո՞վ է ձգելով պոկել պարանը:
2) Նա իրեն հայտնի բազմաթիվ աղբյուրներ գիտեր, որոնցով կարողանում էր վաստակել փոքրիկ գումարներ:
3) Մայրաքաղաք գալով՝ մի օր հանդիպեցի ուսուցչիս. որքա՜ն էր փոխվել նա:
4) Դամբարանների մասին մեզ են հասել սոսկ կցկտուր տեղեկություններ:

60 **Ո՞ր նախադասության մեջ դերանունով արտահայտված որոշիչ կա:**

1) Հեռվից կապտավուն սարերն այնքան պարզ էին երևում, որ կարելի էր համրել նրանց մաքուր լանջերի ձորակները:
2) Բուքն է լալիս. հողմ ու ձյուն, Մառախուղ է և մշուշ. Ո՞վ է անվերջ հեծեծում, Ո՞վ է կանչում այսպես ուշ:
3) Մեր տան ներքնահարկը մինչև այժմ ոչնչի չի ծառայել. այնտեղ տարիներ շարունակ անպետք իրեր են կիտված եղել:
4) Թռչունի սիրտը մեկ րոպեում այնքան արյուն է մղում, որն առնվազն երկու անգամ գերազանցում է սեփական քաշը:

61 **Ո՞ր նախադասության մեջ անջատման խնդիր կա:**

1) Ես չեմ պատրաստվում հրաժարվել իմ ընկերներից, չնայած ամեն ինչ ինձ համար արդեն վերջացել է:
2) Թեև պայմանավորվել էինք, որ սեղանի շուրջ չէինք խոսելու այն օրվա բանավեճից, այնուամենայնիվ նա խախտեց պայմանը:
3) Երբ կատաղի քամին մութն ընկնելուց հետո ցնցում էր լուսամուտի փեղկերը, նա հուզված հետ ու առաջ էր անում իր սենյակում:
4) Լույսը բացվելուն պես նա Արուսի հետ դուրս էր եկել Քարակերտից, գնացել պահեստ՝ ապրանք ստանալու:

62 **Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:**

1) Աստղերն են ժպտում լուսեղեն նազով, Խաղաղ դաշտերը մութն է համբուրում:
2) Սի՛րտ իմ, այդ ո՞ւմ ես դու իզուր կանչում, Տե՛ս՝ գիշերն անցավ, աստղերը մեռան:
3) Բերանն արնոտ մարդակերը էն անբան Հազար դարում հազիվ դարձավ մարդասպան:
4) Իրար գլխի փուլ են գալիս, Իրար հերքում հոխորտալով Ժամանակի ալիքները:

63 **Ո՞ր նախադասության մեջ միայն մեկ բութ պիտի դրվի:**

1) Մեծ մարդը իր երկու սարկավագների Տիրեի և Ռոստոմի հետ հրաշքով փրկվելով հասավ Պատմոս կղզու ափերը:
2) Նա ցավով ու տառապանքով գրեց «Երկիր Նաիրին» հայրենիքի ճակատագրին նվիրված այդ գիրքը լի խոր թախիծով:
3) Անհրապույր կայարանում ստիպված էինք երկար սպասել հայկական գնացքին որը պիտի կազմվեր հենց այդտեղ կայարանում բայց այդ գործն ուշանում էր և ոչ ոքի հայտնի չէր շարժակազմը երբ պատրաստ կլինի:
4) Այդ աղմուկի վրա մարդիկ տներից դուրս վազեցին պարզելու ինչ է պատահել:

64 **Ո՞ր տարբերակում են բոլոր ընդգծվածները գոյականական անդամի լրացումներ:**

1) Ամեն անգամ՝ **նորանոր** ալիքների հսկա դեզերի հանդիպելիս, **ինձ** պատում էր սարսափը:
2) Երբեմն քամուց գազազած վայրագ ալիքները **ուժգին** թափով բարձրացնում էին նավը **իրենց** բաշերի վրա:
3) Թվում էր՝ ծովը իր դեպի վեր **ցատկող** հորձանքներով երկնքի **երեսին** է թքում:
4) Նավը մի քանի վայրկյան պտտվեց օդի մեջ, **արագ** վար իջնելով՝ տնքաց այնպես, որ կարծես **նրա** ողնաշարը կոտրվեց:

65 **Տրված հատվածը «Մեծապատիվ մուրացկանները» վեպի ո՞ր հերոսին է վերաբերում:**

«Ուներ այնպիսի նայվածք մը, որուն եթե պ. Հ. Վարդովյան հանդիպեր յուր աչերով, կը հարցուներ այդ մարդուն. «Ի՞նչ ամսական կ՚ուզես՝ թատրոնիս մեջ ապուշի դեր կատարելու համար»:

1) Մանուկ աղային
2) Աբիսողոմ աղային
3) բանաստեղծին
4) դերասանին

66 **Ո՞ր բառն է բաց թողած:**

Եղեգնյա գրչով վրեժ երգեցի.
Ընդ եղեգան փող ……ելաներ:

1) սի՛րտս
2) բո՛ց
3) ո՛ղբ
4) լո՛ւյս

67 **Ո՞ր նախադասություններում վերաբերական *չկա:***

1. Սպասավորներից մեկը քնած էր՝ գլուխը սեղանին դրած, մի ուրիշը մեջքը հենել էր պատին և բութ հայացքով նայում էր դռանը՝ ըստ երևույթին քունը հաղթահարելով:
2. Դուք կարող եք գեթ սուտ սիրով խաբել, Հիվանդ է սիրտս. փայփայեցե՛ք ինձ:
3. Նրա մորուքն սկսվում էր համարյա աչքերի տակից ու ծածկում ամբողջ երեսը. արծվային քիթն անգամ ծածկված էր մազերով:
4. Ժպիտը մարող գույներով գծագրվում էր նրանց դեմքերի վրա և իսկույն անհետանում:
5. Նա հազիվ էր զսպում իրեն, որ ձայնը չբարձրացնի:

68 **Ընդգծվածներից որո՞նք նախադասություն *չեն:***

Մուղանի անապատն է: 1. **Ոչ մի ծառ**, ոչ մի կանաչ թուփ, ոչ մի թռչուն: Կարծես մի սոսկալի հրդեհ լափել էր երկրի կյանքը՝ 2. **թողնելով միայն միլիարդավոր մոծակների**, որոնք, 3. **թվում է**, երկրի տերերն են և 4. **ամեն ինչ կարող են անել**: Իրիկնադեմին, երբ արևի հրե գունդը իջնում է հորիզոնի վրա՝ 5. **ասես հոգնած ողջ օրը անապատի ավազը կիզելուց**, նրանց փոխարինում են ճահիճների գորտերը՝ 6. **իրենց կվկվոցներով վրդովելով երկրի լռությունը**: 7. **Մի ինքնատեսակ համերգ**, որ ինչ-որ համակրանք է ներշնչում ինձ դեպի այդ կենդանիները, 8. **որ մի տեսակ անարդարացի անարգված են**:

69 **Ո՞ր մտքերն են հակասում տեքստի բովանդակությանը կամ *չեն* բխում նրանից:**

Հնում մարդիկ վախենում էին ոչ միայն արևի խավարումներից՝ դրանք կապելով գերբնական ուժերի հետ, այլև արևի վրայի բծերից: Վերջինները նրանք համարում էին սատանայի դավեր՝ ամբողջովին չգիտակցելով, սակայն, ո՛չ այդ բծերի կապը մագնիսական փոթորիկների հետ, ո՛չ վերջիններիս թողած ազդեցությունը մարդու վրա: 19-րդ դարում նկատեցին, որ երբ լուսատուն նկատելիորեն «բծավոր է դառնում», գրանցվում են մագնիսական փոթորիկներ, հաճախանում են հյուսիսափայլերը: Արդեն 20-րդ դարում ռուս տաղանդավոր գիտնական Ալ. Չիժևսկին նկատեց կենդանի օրգանիզմների վրա արևի ակտիվության ազդեցությունը և կիրառեց «արեգակնային եղանակ» տերմինը: Պարզվեց, որ գեոմագնիսական դաշտում «ցնցումներից» առաջանում են ցածր հաճախականության ռադիոալիքներ, որոնք ազդում են մարդու վրա: Մագնիսական փոթորիկներին արձագանքում է մարդկանց 60 տոկոսը: Ամենից շատ այդ ալիքները վնասակար են սրտին. հաճախացնելով սրտի զարկերը՝ կարող են անսպասելի բարձր ճնշման և մահվան պատճառ դառնալ: Նույն ազդակից խտանում է արյունը, դանդաղում՝ նրա հոսքը, բարձրանում է խոլեստերինը, առաջանում են գլխացավեր, անքնություն, չպատճառաբանված թուլություն, սրվում են նևրոզները:

1. Ըստ դիտարկումների՝ հյուսիսափայլերից առաջանում են մագնիսական ցնցումներ, որոնք հանգեցնում են կենդանի օրգանիզմների ինքնազգացողության վատացման:
2. Չգիտակցելով հանդերձ մեր լուսատուի հետ կապված երևույթների պատճառները՝ հնագույն մարդիկ նկատել էին, որ խավարումների պատճառով շատանում են առողջական խնդիրները:
3. Մագնիսական փոթորիկների հետևանքով մարդկանց զգալի մասը կարող է ունենալ ինքնազգացողության վատացում, հիմնականում սրտի հետ կապված խնդիրներ:
4. Արևի վրայի բծերի շատանալը ուղղակի ազդեցություն ունի հյուսիսափայլերի հաճախակի դառնալու վրա:
5. Ռուս գիտնական Ալ. Չիժևսկին, ուսումնասիրելով արևի բծերը, «սատանայի դավեր» արտահայտությունը առաջարկեց փոխարինել «արեգակնային եղանակ» տերմինով:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Դերբայական դարձվածը չի կարող ունենալ դերբայական դարձված լրացում:
2. Դերբայական դարձվածի կազմում կարող են լինել կապեր և շաղկապներ:
3. Անորոշ դերբայը կարող է դերբայական դարձված կազմել միայն գործիական հոլովով:
4. Որպես դերբայական դարձվածի գերադաս անդամ կարող են հանդես գալ բոլոր անկախ դերբայները:
5. Նախադասության միևնույն անդամը կարող է ունենալ դերբայական դարձվածով արտահայտված երկու լրացում:
6. Դերբայական դարձվածը չի կարող լրացնել գոյականական անդամի: